

Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտոնական առաքելությունների գործունեությունն ԱՄՆ-ում և միասնականության խնդիրը (1919 թ. վերջ - 1920 թ. սկիզբ)

Ղամբարյան Արմենուհի Վ.

պ.գ.թ., դոցենտ, Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-5102-3725>

vanarmin@mail.ru

ՀՏԳ՝ 947.925+32(73); EDN: YEJEHT

DOI: 10.58587/18292437-2024.4-76

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ առաքելություն, ամերիկահայություն, կուսակցություն, միասնություն, Հայաստանի Հանրապետության, ԱՄՆ, հանգանակություն, գաղութ

Деятельность официальных миссий Первой Республики Армения в США и проблема единства (конец 1919 г.-начало 1920 г.)

Гамбарян Арменуи В.

к.и.н., доцент, старший научный сотрудник отдела общей истории,
Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. В конце 1919 – начале 1920 годов перед официальными (гражданской и военной) делегациями Первой Республики Армения, находящимися в США, помимо политических, дипломатических, экономических и военных поручений, была возложена также задача установления, укрепления и сохранения единства в армянской колонии Америки. На начальном этапе деятельности миссии были зафиксированы некоторые положительные шаги в вышеуказанных областях, особенно в вопросе укрепления сплоченности и единства в армянской общине. Тем не менее, результаты не были решающими и в качестве окончательной оценки следует констатировать, что большую часть поставленных задач, в том числе и проблему армянской колонии, делегациям не удалось выполнить.

Ключевые слова и словосочетания: миссия, армяне Америки, партия, единство, Республика Армения, США, сбор средств, колонии

The Activities of the Official Missions of the First Republic of Armenia to the United States and the Issue of Unity (late 1919 - early 1920)

Ghambaryan Armenuhi V.

Candidate of Sciences in History, Associate Professor,
Senior Researcher at the NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. In late 1919 and early 1920, the official – civil and military - delegations of the First Republic of Armenia in the United States, in addition to political, diplomatic, economic and military assignments, were also tasked with establishing, strengthening and maintaining unity in the Armenian colony of America. At the initial stage of the mission's activities, some positive steps were recorded in the above-mentioned areas, especially in the issue of strengthening cohesion and unity in the Armenian community. However, the results were not decisive and, as a final assessment, it should be noted that the delegations failed to fulfill most of the tasks set, including the problem of the Armenian colony.

Keywords & phrases: mission, Armenians of America, party, unity, Republic of Armenia, USA, fundraising, colony

Ներածական

1919 թ. հոկտեմբերի 9-ին Նյու Յորք ժամանեց Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը՝ նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ [20, 1919, 17 հոկտեմբերի; 24, 1919, 18 հոկտեմբերի; 4, էջ 457; 9, ս. 230; 10, ս. 279 11. ք. 383]: Պատվիրակությունն ԱՄՆ էր գործուղվել Հանրապետության խորհրդարանի կողմից 1919 թ. փետրվարի 4-ին հաստատված

հատուկ օրինագծի համաձայն [2, էջ 167]: Աշխատանքային խումբը՝ հայտնի որպես քաղաքացիական առաքելություն¹, պետք է դիմեր Հայաստանի Խորհրդի անունից Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը և խնդրեր նրանց օգնությունը՝ ներմուծելու Հայաստան երկրին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ապրանքներ: Հ.

¹ Աշխատանքային խմբի կազմավորման մասին համառոտ տե՛ս [14; 15]:

Քաջագնունու նախագահությամբ աշխատանքային խմբում ընդգրկված էին տնտեսական խորհրդականներ՝ ֆինանսների նախկին նախարար Արտաշես Էնֆիաջյանն ու գյուղատնտես Արտեմ Փիրայանը և կապիտան Սուրեն Մելիքյանը՝ իբրև նախագահի քարտուղար:

Մինչ ԱՄՆ մեկնելը՝ քաղաքացիական առաքելությունը 1919 թ. ամռանն ու աշնան սկզբին իր գործունեությունը ծավալեց Եվրոպայում, սակայն այստեղ զգալի արդյունքի չհասավ: Փարիզում՝ Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունների համատեղ նիստում որոշում է կայացվում դիմել ամերիկյան կառավարությանը՝ հենց ԱՄՆ-ում [1, գ. 290, թթ. 55-60]: Ուստիև, Հ. Քաջագնունու պատվիրակությունը Փարիզից ուղևորվում է ԱՄՆ: Պատվիրակությանը միանալու էր Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակություն անդամ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), որը նշանակվել էր ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ: Հատկանշական է, որ միևնույն ժամանակ Փարիզից ԱՄՆ էր գործուղվել նաև Ազգային պատվիրակության՝ այն է Պողոս Նուբարի անձնական ներկայացուցիչը՝ պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանը [7, էջեր 490-492, 8, էջ 590]:

ԱՄՆ-ից տնտեսական աջակցություն ստանալու հիմնական նպատակից բացի՝ Հ. Քաջագնունին լիազորվել էր նաև քաղաքական խնդիրների լուծումներն ապահովելու իրավունքով: Վերջիններիս շարքում առաջնայինը Հայաստանի Հանրապետության ճանաչման հարցն էր: Ինչ վերաբերում էր ռազմական հարցերին և սկնկալվելիք օգնությանը, ապա դրանք բարձրացնելու և ընթացք տալու համար Միացյալ Նահանգներ պետք է ժամանեին առանձին՝ ռազմական առաքելություն՝ ի դեմս գեներալ Հակոբ Բգրատունու և գորավար Անդրանիկի՝ համապատասխանաբար՝ իբրև Հայաստանի Հանրապետության և Պողոս Նուբարի ներկայացուցիչների:²

Իրավիճակը գաղութում՝ մինչ պատվիրակությունների ժամանումը

Մինչ Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին պաշտոնական պատվիրակության ժամանումն ԱՄՆ, ամերիկահայ մամուլն արդեն գրում էր վերջինիս վերաբերյալ գաղութում տիրող տրամադրությունների մասին և ողջույնի խանդավառ խոսքերով լցնում պարբերականների էջերը: ԱՄՆ-ի հայ համայնքի ուրախությունը կրկնակի էր. մի կողմից հռեվանքն էր ազատության ու անկախության՝ ազգերի մեծ ընտանիքում, այն է՝ աշխարհի պետությունների շարքում տեղ գրավելու առթիվ, մյուս կողմից՝ մասնավորապես, հենց ԱՄՆ-ի հետ ՀՀ պաշտոն-

նական հարաբերությունների հաստատման փաստը: «Մեր բազմառեսակ ցավերուն եւ ծանրածանր տագնապներուն մեջ յոյժ մխիթարական դէպք մըն է ստիկա: Քաղաքական հասարակություններու շարքին մեջ Հայն ալ տեղ մը կը գրաւէ վերջապես» [24, 1919, 11 հոկտեմբերի, էջ 1301]:

Հանրապետության առաքելության այցն ԱՄՆ ամերիկահայ գաղութի համար արդեն իսկ տոն էր: «Նորածին Հանրապետության ներկայացուցիչներուդ այցելութիւնը իրականք խանդավառած է Ամերիկահայ գաղութը որ խարսխած ըլլալով իր հաւատքը Ձեր կառարելիք դիւանագիտական աշխատանքներու բարեհաջող եզրակացութեան՝ կապաւ տեսնել ու լսել գձեզ ու ևս աւելի սերտօրէն կապուիլ ձնող հայրենիքի Ֆիզիկական, նիւթական ու բարոյական ամէն հնարաւոր միջոցներով» [20, 1919, 17 հոկտեմբերի]:

Հարկ է նշել, որ խնդրո առարկա ուսումնասիրվող ժամանակահատվածում միանշանակ չէր ամերիկահայության տարբեր շերտերի վերաբերմունքը Հայաստանի նորաստեղծ Հանրապետության հանդեպ: Ընդհանրապես գաղութում տիրող մթնոլորտն ինքնին հանդարտ չէր:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից ամերիկահայ ազգային գործիչների ջանքերով հնարավոր էր դարձել հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական պահին առանձին միավորումներով համախմբել ընդհանուր առմամբ միասնական գործելու պատրաստակամություն դրսևորած տեղի ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպությունների գործունեությունը՝ մասնակցելով ինչպես բնօրրանում ծավալված կամավորական շարժումներին, բազմահազար կարոտյալ հայրենակիցներին ու գաղթականներին սատարելուն, այնպես էլ Եվրոպայում և ԱՄՆ-ում Հայ Դատի պաշտպանությունը հետամտող քաղաքական, դիվանագիտական, ռազմական և այլ բնույթի ձեռնարկներին [12, էջեր 183-184]:

Վերոնշյալ նպատակով կազմակերպված ամերիկահայ միջկուսակցական և ազգային մարմիններից էր 1917 թ. մարտին Բոստոնում հիմնված Հայ ազգային միությունը, որն ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցչական մարմինն էր [6, էջ 365; 12, էջ 184]: Միության հիմնումը մեծապես նպաստեց գաղութի համախմբմանը. «Հայրենասիրությունը՝ իր ամենուն սրտի խոտող կոչով յաղթած է ամեն հաշուի և նկատումի: Բոլոր խոչնդոտները, դժվարությունները հարթուած՝ անհետացած են վարկեանի մեջ...» [19, 1917, 21 ապրիլի]: Իր ծավալած հայանպաստ գործունեության շնորհիվ Հայ ազգային միությունն ԱՄՆ-ի կառավարության կողմից ճանաչվել էր իբրև հայկական գաղութը ներկայացնող մարմին, որի հետ պաշտոնական հարաբերություններ էին հաս-

² Ռազմական առաքելության մասին տե՛ս [16; 17; 18]:

տատվել [6, էջ 376]: Սակայն կազմակերպության խանդավառությունը տևական չեղավ. «Տրոփիստե կուսակցական զգացումը չկրցաւ գալուի գործակցութեան ընթացքին» [6, էջ 361]: Կուսակցությունների միջև տիրող անհամերաշխությունն ու նրանց հետապնդած նեղ կուսակցական շահերը հանգեցրեցին սկզբում Ս. Դ. Հնչակյան և ավելի ուշ՝ Հ. Յ. Դաշնակցության հեռանալուն Միությունից:

Գաղութի ներքին կյանքում դրական փոփոխություններ սկսեցին տեղի ունենալ Փարիզի խաղաղության վեհաժողովի մեկնարկից ի վեր: Ամերկահայությունը լիովին համոզված էր, «թէ անհկա է ճշմարիտ մեկնակետը սպազայ յաջողութեանց» [20, 1919, 27 յունիսի]: Թվում էր, թե համերաշխության և միասնականության ոգին պիտի թեւածի ամենուր՝ ՀՀ-ում և հայկական բոլոր գաղութներում, որպեսզի թեև անտեսանելի, բայցևայնպես կուռ և կայուն հիմք հանդիսանա օտարների համար Միացյալ Հայաստանի խնդրին լուծում տալու հնարավորությունը: Բանականությունն ու սթափ մտածողությունը պետք է որ սպահովեին իրավիճակի լուծումը և կարգավորեին փոխադարձ հարաբերությունները, երբ նոր դիպվածով կրկին խորացվեցին անհամաձայնությունները: 1919 թ. մայիսի 28-ին, Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետության Դաշնակցական կառավարությունը հռչակել էր իրեն Միացյալ Անկախ Հայաստանի կառավարություն: Այս «Ակտ»-ի դեմ բողոքել էին տարբեր քաղաքական հոսանքներ, ազգային շահերի խաչաձևումներ առաջ եկան Փարիզում հայ ազգը ներկայացնող երկու պատվիրակությունների միջև [20, 1919, 31 հոկտեմբերի]: Անհանդուրժողականությունն իշխելով հենց ամենաբարձր ատյաններում՝ Փարիզում անտեսանելի խողովակներով տեղափոխվում էր հայկական իրականության այլ կետեր: Դժգոհության այլք էր բարձրացել նաև ԱՄՆ-ի հայության մեջ: Եթե մի որոշ ժամանակ ամերիկահայությունը՝ կամավորականության և վերաշինության հարցերի շուրջ համախմբված գործում էր համերաշխ, այժմ՝ կրկին առաջ եկավ աղետալի և աղմկահարույց պայքար: Հայ ազգային Միությունը, որի կորիզը կազմում էր Ռամկավար Ազատական կուսակցությունը, ըստ Կանոնադրության՝ հավատարիմ մնաց Ազգային պատվիրակությանը: Ինչ վերաբերում էր Դաշնակցություն կուսակցությանը, ապա այն հետևորդն էր ՀՀ դաշնակցական կառավարության քաղաքականությանը: Համաձայնության եզրեր չէին հաստատվում նաև Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյանների կուսակցությունների մեջ, թեպետև նրանց քաղաքական ուղղությունն ու ձգտումները էական տարբերություն չունեին [6, էջ 369]:

Չանդրադառնալով հակադրվող կողմերի տեսակետներին ու համոզումներին, ինչպես նաև նրանց միջև առկա տարաձայնություններին՝ նշենք, այնուամենայնիվ, որ, առանց բացառության, քաղաքական և հասարակական բոլոր հոսանքներն ու ուղղությունները հասկանում էին ցավատանջ իրողությունը և իրենց պաշտոնաթերթերում անդրադառնալով ստեղծված իրավիճակին՝ նշում, որ ժամանակն էր դարձանել թույլ տված սխալները: Տագնապալից կացությունը, որում հայտնվել էր նորաստեղծ Հանրապետությունը՝ դրսից վայրագ թշնամիների, և ներսից՝ սովի ու թշվառության սպառնալիքների տակ, ստիպում էր գիտակցել, որ նման վտանգի առջև ցանկացած այլ խնդիր կորցնում էր իր նշակությունը: Ուստիև այն խալխուլ, պայմանական համաձայնությունները, որ ձևավորվում էին Փարիզում հայկական երկու պատգամավորությունների միջև, իրենց արտացոլումն էր գտնում նաև արտասահմանի, մասնավորապես, ԱՄՆ-ի հայության շրջանում: Յուրաքանչյուրն իր պարտականությունն էր համարում ձեռք ձեռքի տալ և հնարավոր ամեն միջոցով օգնություն հատկացնել Հայաստանի Հանրապետությանը. «Տարակոյս չկայ թէ Հայութեան ստուար մեծամասնութիւնը համակիր չէ Երուսաղիմ ներկայ կառավարութեան հետ: Պետք է գիտնալ սակայն, որ կառավարութիւնները կանցնեն կամ կր փոխուին, բայց Պետութիւնը, Հայրենիքը կը մնայ ու մեր պարտքն է պաշտպանել զայն ամէն գնով, առանց ազգային քաղաքականութեան հակասելու. ամուր մնալով այն առողջ սկզբունքներուն վրայ, որոնցով միայն կրնայ շահուիլ Ամբողջական Հայաստանի Դատը» [20, 1919, 18 նոյեմբերի; 28, 1919, 4 հոկտեմբերի]:

Տարբեր մեղադրականներ հնչեցնելով միմիանց հասցեին՝ բոլոր հոսանքները, միևնույն ժամանակ, դիմում էին իրար՝ համախմբվածության նույնաման կոչերով. «Ժամանակ է որ պթափինք այլևս մեր անձնական կիրքերուն գոհելէ ըդհանուր ժողովուրդի մը սպազան: Միսայ քայլ մը, անտակտ խոսք մը, թույլ և անջիղ գործունէութիւն մը ազգի մը նակատագիրը դեկալարող առաջնորդներու կողմէն՝ պիտի մատնէն նույն ազգը սպազայ դժբախտութեանց և խանրախանր աղետներու» [20, 1919, 27 յունիսի]:

Ուստի զարմանալի չէր, որ ամերիկահայության ակնկալիքները Հանրապետության առաքելությունից շատ լուրջ էին: «Մենք կուսանք որ Պ. Բաշագնունի եւ իր պաշտօնակիցները կրննեն այս կետերը, եւ հակառակ իրենց անուան ու պաշտօնին շուրջ յարուցված աղմուկին, հարկ եղած լրջութեամբ եւ իմաստութեամբ կը շարժին, եւ մեր գաղութին մեջ փոխանակ նոր եւ ցավալի պայքարներու դուռ բանալու, ներդաշնակութեան տարր մը կը դառնա, որով իրենց շուրջ կը բոլորեն անխտիր բոլոր

հայրենասերները: Եւ փոխանակ միակ հոսանքի մը՝ կապահովեն ու կը վայելեն Ամերիկայի ամբողջ Հայ գաղութին անվերապահ գործակցութիւնը» [28, 1919, 4 հոկտեմբերի]:

Այս էր ամերիկահայ գաղութում տիրող իրավիճակն ու տրամադրությունները մինչ ՀՀ քաղաքացիական և ռազմական առաքելությունների ժամանումն ԱՄՆ:

Առաքելությունների ժամանումն ու ամերիկահայության սպասումները

Առաքելությունների ժամանման նախօրյակին ամերիկահայ գաղութում տիրում էր այն համոզմունքը, որ «մեր այսօրուան առաջնորդներու խնաստութենէն կախում պիտի ունենայ Հայաստանի փառաւոր սպագան և կամ անոնց անմրտութեան շնորհիւ պիտի բոլորէ առաջինէն աւելի մոշայ դարաշրջան մը» [20, 1919, 18 նոյեմբերի]: Հարց էր, թե արդյո՞ք նման բաղձալի սպասումներն իրականություն կդառնան: Բանն այն էր, որ Փարիզում՝ Ազգային՝ Նուբար Փաշայի և ՀՀ պատվիրակությունների միջև առկա անհամաձայնություններն ինքնաբերաբար իրենց կնիքն էին դրել ԱՄՆ մեկնող առաքելությունների ապագա գործունեության վրա:

Երբ ՀՀ քաղաքացիական պատվիրակությունը ժամանեց Նյու Յորք, ամերիկայի հայկական գաղութը՝ մի կողմ դնելով Հանրապետության կառավարության հանդեպ ունեցած վերապահություններն ու վերջինիս սխալներն ու սայթաքումները, սիրալիք զգացումներով ողջունեց երկար դարեր իր վեր առաջին անգամ կազմավորված հայկական պետության պաշտոնյաներին՝ նրանց մեջ տեսնելով միմիայն խորհրդանշանը հայկական անկախության: Հանրության մեջ թեև անհամաձայն էին հետևյալ մտքերը. «Մեր յարգելի հիւրերուն այցելութեան նրպատակը, թէև մեզի անծանօթ, գլխավորապես քաղաքական բնոյթ ունի անշուշտ: Այս պարագային՝ ամերիկահայ գաղութը անոնց կը պարտի ամեն աջակցութիւն եւ մեծարանք, - իսկ իրենցմէ կակնկալէ՝ ներշնչում եւ հրահանգ» [24, 1919, 11 հոկտեմբերի, էջ 1302]:

Հնարավորինս աջակցելու և պատվիրակությանը բազմաբնույթ օգնություն հատկացնելու պատրաստակամությունը դրսևորվում էր համայնքի բոլոր շերտերի կողմից: Նրանց ձայնը հնչեցվում էր մամուլի խմբագրականներում. «Այսօր Հայության ազատության ավետումը դու՛ք կրեք մեզի: Մոշայ ամպեր դեռ առկախ կը մնան հորիզոնին վրայ: Չանոնք փարատելու ձեր գերագույն ճիգերուն՝ մենք պիտի նուիրենք ամեն ինչ: Պարտք դրէ՛ք, պահանջ դրէ՛ք այս գաղութին վրայ - և դուք պիտի տեսնէք թէ, հակառակ քաղաքական տարակարծութիւններու, ամերիկահայ գաղութը պիտի ներկայանայ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներուն՝ ծայրագոյն գոհաբերութեան

ընդունակ և հայրենիքի տենչովը տոգորուող հայութեան մեկ անբաժան հատուածը: Հրամայեցէ՛ք մենք պիտի հնազանդինք ձեզի» [20, 1919, 17 հոկտեմբերի]:

Ամերիկահայության ոգևորությունն անմասն չէր մտահոգությունից առ այն, թե ի՞նչ դիրք ունեին Հանրապետության պատվիրակներն Ազգային պատվիրակության հանդեպ, նրանց քաղաքական հայացքը արևմտահայ նահանգների և Կիլիկիայի նկատմամբ, որն էր բուն դերը Գ. Փաստրմանյանի, ով Ազգային պատվիրակության փոխ-ատենապետի տիտղոսն էր կրում և այժմ ԱՄՆ էր ժամանել՝ որպես ներկայացուցիչ Հայաստանի նորակազմ Հանրապետության: Գաղութի մեծամասնության մտահոգության առարկան էր առաջին հերթին և առավելապես Հանրապետության ներկայացուցիչների պատշաճ վերաբերմունքը Պողոս Նուբար փաշայի անձի և պաշտոնի նկատմամբ: Նրանք ակնկալում էին, որ հյուրերը՝ իբրև դիվանագետներ, իբրև պաշտոնական անձինք պետք է «սարդարացնէին Ամերիկայի Դաշնակցական թերթերուն յարձակումները հայրենասէր Տերունիին դեմ... Այդ հեղինակութեան դէմ կատարուած ոեւէ փորձ դառնապէս կը վշտացնէ ամբողջ գաղութը, եւ յառաջ կը բերէ ողբալի շփոթութիւններ» [24, 1919, 11 հոկտեմբերի, էջ 1302]:

Ամբողջ գաղութը քաջահույս էր, որ վերոնշյալ ճշմարտությունը հարգելով և ըստ այդմ գործելով, Հանրապետության առաքելությունը կառուցողական և արտակարգ դեր էր խաղալու ԱՄՆ-ում և պիտի առժանանար համազգային երախտագիտության: Մեծ վստահություն էր ներշնչել ամերիկահայությանն այն փաստը, որ թե՛ քաղաքացիական և թե՛ ռազմական առաքելությունների շրջանակներում Հանրապետության կառավարության պատվիրակների հետ մեկտեղ գործում էին Ազգային Պատվիրակության լիազոր ներկայացուցիչները: Վերջինս դիտարկվում էր որպես համերաշխության քաղաքականության և Միացյալ Հայաստանի դատի ջատագովության ցուցիչ: «Ինչ որ ալ լինին երեւոյթներն ու իրականութիւնները՝ Հայ ժողովրդին միակ բաղձանքն ու պահանջն է որ երկու պատուիրակութիւնները իրարմէ անբաժան գործեն» [24, 1919, 18 հոկտեմբերի, էջ 1336]: Ամերիկահայությունը վստահ էր, որ «Մէկ որպէս լրացուցիչ միւսին և փոխադարձաբար՝ այս երկու առաքելութիւնները կոչուած են կատարելու նախախնամ դեր մը մեր ներկայի ճգնաժամային դրութեան մէջ» [20, 1919, 5 դեկտեմբերի]:

Ոչ դաշնակցական մամուլը, արտահայտելով ամերիկահայության լայն շրջանակների մտահոգությունը, ներկայացնում էր գաղութում տիրող անառողջ մթնոլորտը և ընդգծում, որ Ամերիկայի Դաշնակցական մամուլն անհարկի աղաղակներով մտքեր էր հուզում, կասկածներ

հարուցում և Հայ ժողովուրդը Հայ հանրապետությունից հեռացնում: Ուստիև, հանրության անունից պարբերականները դիմում էին դաշնակազմական կառավարության պատվիրակներին. «Ներկայացուցիչներուն կը մնայ դարմանել այդ չարիքը, ցոյց տալով որ Արարատեան Հանրապետութիւնը կը պատկանի ո՛չ մեկ կուսակցութեան, հասլա Հայ ազգին, թէ՛ տանոր այսօրուական կառավարութիւնը կազմուած ըլլայ Դաշնակցականներէ» [24, 1919, 11 հոկտեմբերի, էջ 1302]: Սպասումները մեծ էին. «Որչա՛ի խար պիտի ըլլայ մեր հրնուանքը եթէ անոնք իրենց հետ բերեն նստե սիրոյ եւ համերաշխութեան պատգամը» [24, 1919, 11 հոկտեմբերի, էջ 1302]:

Չափազանց հուսադրող էր համայնքի համար այն, որ Նյու Յորք ժամանելու հենց նույն օրն Առաքելության ներկայացուցիչները՝ թե՛ Հայաստանի Հանրապետութեան և թե՛ Ազգային պատուիրակության, հրապարակավ հայտարարեցին որ Միացյալ Հայաստանի դատի շուրջ որևէ անհամաձայնություն չկար երկու պատուիրակությունների միջև, և որ նրանք գործում էին սիրով ու համերաշխությամբ: Մեծ տպավորություն և դրական արձագանք էր ստացել գաղութում նաև այն, որ «Հայ Հանրապետութեան պատուիրակներէն երկուքը ելեմնուական խորհրդակներ Պր. Արտաշէս Էնֆիանեանց, եւ երկրագործական խորհրդակներ Պր. Արտէմ Փիրայեան – կը պատկանին Կովկասահայոց Ժողովրդական Կուսակցութեան, ինչ որ կը ցուցանէ թէ Երևանի Կասառավարութիւնը կը գնահատէ ոչ-դաշնակցական մասնագետներու արժանիքը եւ կ'օգտուի անոնցմէ» [24, 1919, 25 հոկտեմբերի, էջ 1368]:

Այս առումով կարելի է նաև պատկերացնել, թե հաշտության ինչ ավետում էր գաղութի համար քաղաքացիական առաքելության մաս կազմող երկու հատվածների ղեկավարների՝ Հ. Քաջազունու և պրոֆեսոր Աբր. Տեր Հակոբյանի՝ 1919 թ. հոկտեմբերի 25-ին ամերիկահայությանն ուղղված համերաշխության կոչը: Այդ համատեղ կոչը հրատարակվել էր ամերիկահայ մամուլի բոլոր օրգաններում, ինչպես նաև արտատպվել արտասահմանի հայկական տարբեր գաղութներում լույս տեսնող պարբերականներում: [21, 1919, 23 նոյեմբերի; 24, 1919, 25 հոկտեմբերի, էջ 1367; 20, 1919, 4 նոյեմբերի]: Առաքելության ղեկավարները՝ նախ ընդգծելով, որ ԱՄՆ էին եկել Ազգային Դատի համար աշխատելու, խորին շնորհակալություն էին հայտնում սիրալիք ընդունելության համար և բարձր գնահատում գաղութի կատարուած հայրենասիրական աշխատանքները: Նրանք նշում էին կոչի մէջ, որ «Տառով կը տեղեկանանք սակայն որ սիսալ գրույցներ եւ անտեղի մեկնութիւններ կան Հայ Ազգային Պատուիրակութեան եւ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան

յարաբերութեանց եւ գործակցութեան մասին» [24, 1919, 25 հոկտեմբերի, էջ 1367]: Պատվիրակները չափազանց մտահոգ էին այն կապակցությամբ, որ երկու պատուիրակությունների շուրջ հաճախակի հրատարակվում էին կարծիքներ և դիտողություններ, որոնք բացարձակապես հակասում էին իրար և որոնք իրապես տեղ էին տվել լրագրական տխուր ու վնասարար պայքարի: Ըստ Քաջազունու և Տեր Յակոբյանի կոչի՝ ստեղծված կացությունը ո՛չ միայն ցաւալի էր, այլև չափազանց վտանգավոր Ազգային դատի համար: Ուստիև նրանք հայտարարում էին. «... Յանուն մեր տառապեալ Ժողովրդեան, եւ յանուն այն սրբազան դատին, որուն յաջողութիւնը բուն փափաքն է մեր ամենուս, դիմում կ'ընենք մեր բոլոր Ամերիկաբնակ սիրեցեալ հայրենակիցներուն, որ ինչպէս մենք ճշդուած ու ընդունուած սկզբունքներու համաձայն կը գործակցինք համերաշխաբար եւ եղբայրաբար, նոյնպէս եւ իրենք ջանան նոյն ոգիով գործել եւ գործակցիլ ի սէր մեր բազմաչարչար ազգին, որուն շահերն միշտ գեր ի վերոյ են բոլոր նկատումներէ, ի մասնաւորի ներկայ այնքան վճռական ժամանակի մը մէջ» [24, 1919, 25 հոկտեմբերի, էջ 1367]:

Անշուշտ այս համերաշխության ու եղբայրության լուրը ճշմարիտ ուրախություն պիտի պատճառեր բոլոր հայերին անխտիր: Բացի դա, Փարիզից Հայկական պատվիրակությունները նույնպես համատեղ կոչով հատուկ դիմել էին ամերիկահայությանը, որն առանձին հեռագրով ուղարկվել էր պրոֆ. Տեր Հակոբյանին՝ հրատարակության հանձնելու խնդրանքով: Ա. Ահարոնյանի և Պօղոս Նուբարի ստորագրությամբ հեռագրում ասվում էր. «Մեծ հաճոյքով կարդացինք Քաջազունիի և Տեր Յակոբյանի կողմանէ ստորագրուած յայտարարութիւնը: Այն՝ բուն մեր զգացումները կը ներկայացնէ: Մեր համոզումն այնէ որ ներկայ վճռական ժամուս, երբ մեր ազգային դատին որոշումը այնքան մօտ է, միութիւն և համերաշխութիւն անհրաժեշտ են: Խորհուրդ կուտանք անմիջապէս վերակազմել Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը, ուր արդարապէս ներկայացուին բոլոր կուսակցութիւններն և բոլոր խումբերն ընդհանուր համաձայնութեամբ մը: Այս Միութիւնը որ երէկ այնքան գերազոյն ծառայութիւններ մատուց Ազգային Դատին՝ կրնայ վաղն ալ մեծ դեր մի խաղալ, կատարելու համար հայրենասիրական, առիպողական, կենսական և ամէն պայքարէ վեր գործեր» [20, 1919, 28 նոյեմբերի; 24, 1919, 22 նոյեմբերի, էջ 1423]:

Մեծագույն ուրախություն էր առաջացնում բոլոր հայ գաղութներում այն մխիթարական իրողությունը, թե Հանրապետության և Ազգային պատվիրակությունների միջև համերաշխությունն իրական էր դառնում, մասնավորապես Հայաստանի անկախությունը ճանաչելու հարցում: «Մրտապնդող իրականութիւն մըն է նաև

թե՛ Հայկական Հանրապետության մասին տիրող ներքին թիրախացությունները տակաւ կը փարատին» [21, 1919, 30 նոյեմբերի]: Գրեթէ բոլոր ամերիկահայ պարբերականներն, անդրադառնալով գաղութում տիրող տրամադրությանը, նշում էին. «Մեզի, Ամերիկահայերու, կը մնայ հաւատարմօրէն հետեւիլ վերէն տրուած այդ գեղեցիկ օրինակին, եւ պահել ազգային ներդաշնակութիւնը ամեն գնով:... Վայրկեանները խիստ ծանրակշիռ են Հայոյթեան ճակատագրին համար, ուստի մեզմէ կը պահանջուի՝ անմիջական համադրութիւնը մեր ամեն տեսակ ոյժերուն, - իմացական, զգացական, ֆիզիքական, դրամական» [24, 1919, 25 հոկտեմբերի, էջ 1368]: Մամուլում բավական կտրուկ և խիստ էր հնչեցվում նաև տարածված այն կարծիքը, թե դատապարտության են արժանի բոլոր նրանք, ով միաձոյլ բանակէն դուրս կը շեղի, ով որ համերաշխութեան սիրուն պատկերը կ'եղծանէ:

Առաքելությունների դրական ներգործությունը գաղութի վրա

Առաքելությունների ժամանումից սկսած՝ ամերիկահայ մամուլը ողողված էր բարի գալուստի խանդավառ հեռագրերով, որոնց մէջ սեր և հնազանդություն էր հայտնվում Հանրապետության կառավարության պատվիրակություններին: Տարբեր նահանգներից՝ թե՛ առանձին քաղաքական հոսանքների և թե՛ համայնքային պաշտոնական մարմիններից պատվիրակներին ուղարկված հեռագրերում՝ բարի գալուստի, բարեմաղթանքների և շնորհակալական խոսքերի հետ մեկտեղ, խնդրում էին և հրավիրում պատվիրակներին այցելել իրենց նահանգները [21, 1919, 23 նոյեմբերի; 20, 1919, 21 նոյեմբերի, 2 դեկտեմբերի]: Ամերիկահայությունն ամենուրեք, առանց բացառության, պատրաստակամություն էր դրսևորում՝ իր նյութական, բարոյական և ֆիզիկական աջակցությունը և օժանդակությունն ի սպաս դնել Հայաստանի Հանրապետության, որը կորիզն էր՝ սաղմն էր դարեր ի վեր երազած Անկախ և Միացյալ Հայաստանի իրականացման [20, 1919, 21 նոյեմբերի]:

Հանրապետության պատվիրակների պատասխան հեռագրերը, հանդիպումների և տարբեր հավաքույթների ժամանակ հնչեցրած շնորհակալական, հայրենասիրական և ազգասիրական՝ միաբանության և համախմբվածության կոչերով ընդգծված ճառերը, վստահությամբ էին լցրել գաղութի բազմաշերտ հատվածները: Հատկապես ընդգծված էր հավատն առաջին նախարարապետ Հ. Քաջազունու հանդեպ: Վերջինիս ծանրակշիռ վստահեցումների արդյունքում՝ Հանրապետության նկատմամբ դրական և սրտաբաց վերաբերմունքն ավելի կուռ էր դառնում, քանի որ նախկին վարչապետը պնդում էր. «Հայաստանի Հանրապետութիւնը մի մասն է

վաղուան ամբողջական Հայաստանի, - այն բոլոր երկրի, որ դարերով մշակել, իր արիւն քրտինքով պարարտացրել է հայ ժողովուրդը: Այդ Հանրապետութիւնը պետք է ճանչուի այսօր և եթ ու սպաս նրա հետ պետք է միացուին թիրաքահայ նահանգները, մի ամբողջացած, ազատ Հայաստան կազմելու համար» [22, 1919, 26 նոյեմբերի]: Ծրահայաց քաղաքական գործչի տպավորությունն թողած Հ. Քաջազունին ամենուրեք, հայտարարում էր, թե Երևանի կառավարությունը ժամանակավոր էր և փոփոխության պիտի ենթարկվեր՝ Ամբողջական Հայաստանի կառավարության ձևը ստանալու, իսկ մինչ այդ Հանրապետության պետական գործիչները պատրաստ էին հայկական խառը կառավարություն կազմել՝ փոխադարձ գիշումներով: «Ներքին համագործակցութեան այս տրամադրութիւնները ու քայլերը ուրիշ ամէն բանէ աւելի կը զօրացնեն մեր հաւատքը, թէ պիտի յաջողինք Եւրոպայի և մասնատրապէս Ամերիկայի նիւթական և ռազմական օժանդակութիւնը ձեռք բերել և թուրքօ-թաթար վտանգը միանգամ ընդմիշտ կասեցնել՝ մեր դատին վերջնական յաղթանակը սպասովելով» [21, 1919, 30 նոյեմբերի]:

Ի պատասխան ամերիկահայ գաղութի բոլոր համայնքներում կազմակերպված բազմաթիվ հանդիպումներին, ընդունելություններին, ճաշկերույթներին հնչում էին վստահության կարգախոսներ և նմանատիպ խնդրանք-պահանջներ. «Ներկայացուցէ՛ք մեզի մէկ ճակատով, միշտ ու ամէն տեղ, պարզեցէ՛ք մեզի մէկ դրօշակ, առաջնորդեցէ՛ք մեզ մէկ ճամբով եւ այն ատեն կրնաք բացարձակապէս վատահ ըլլալ մեր բոլորանուէր համակրութեանն ու աջակցութեանը ձեր գերազանցապէս հայրենասիրական ձեռնակներուն մէջ» [25, 1919, 30 նոյեմբերի]: Գաղութն անհամբերությամբ հետևում էր պատվիրակությունների աշխատանքներին: Ամերիկահայ թերթերը նորանոր տեղեկություններ էին հայտնում՝ Հայկական դատին ի նպաստ կատարուած՝ քաղաքացիական և ռազմական առաքելությունների և՛ համատեղ, և՛ անջատ գործողությունների մասին:³ Ընթացիկ այդ պատմական երևույթների մեջ ամերիկահայության համար չափազանց նշանակալի էր այն, որ Հայաստանի պատվիրակները «այսօր արդէն գոյութիւն ունեցող Հայ Պետութիւնը կը ներկայացնեն ու կ'ընդունուին այս երկրի պետական անձնատրոյութիւններէն նոյն հանգամանքով» [27, 1919, նոյեմբեր-դեկտեմբեր]: Կասկած չկար, որ Հանրապետության պատվիրակությունը՝ քաղաքական անպառակտելի ճակատ ներկայացնելով՝ պետք է կարողանար արժանավորապես իր կողմը գրավել ամերիկյան տնական համակրությունը և աջակցությունը՝

³ Առաքելությունների գործունեության մասին տե՛ս [4; 9; 10; 15; 16; 17; 18]:

ռազմական և պարենավորման ուղղություններով:

Տպավորությունն այն էր, որ սին խոսքերի, կարգախոսների ու կոչերի ժամանակը անցել էր, և եկել էր գործելու ժամանակը: Դա հասկապես կարևորվում էր, քանի որ ամերիկահայերը վստահ էին, որ ընթացիկ օրերը հայ ազգի համար ճակատագրական, ճգնաժամային, բախտորոշ օրեր էին. «*Զանի մը շաբաթէն Հայկական Խնդրոյն լուծմանը մասին վճռական քայլեր պիտի առնուին, քանզի ա՛յ հիմա յայտնի է թէ կարգը մեզի կերած է ու այսօր աշխարհի դահլիճներն ու դիւանագէտներն իրենց խորհրդակցութիւնները կեդրոնացուցած են մասնաւորապէս Հայկական Խնդրոյն վրայ: Հայ Դատին ամերիկացի բարեկամները եւ մեր Հայ պատուիրակութիւնները դիւանագիտական եւ փրօփականտի ամեն ջանք ու ճիգ թափեցին, ամեն դիմում չրին ամիսներէ ի վեր, եւ բան մ'ալ պակաս թուղուած չէ այդ ուղղութեամբ» [24, 1919, 1 նոյեմբերի, էջ 1399]:*

Ելնելով վերոնշյալից՝ գաղութում տիրում էր նաև այն համոզմունքը, որ Հայ Դատի լուծման ընթացքի համար չափազանց կարևոր էր օտարների, մասնավորապես՝ հայամետ ամերիկացի պաշտոնյաների մոտ բացառապես դրական կարծիք և տպավորություն թողնել: Մտահոգիչ էին այն տեղեկությունները, թե նրանցից ոմանք նախատինքի խոսքեր էին արտահայտում և վերապահություն դրսևորում հայերի ընդհանուր դիմապատկերի վերաբերյալ: Ամերիկյան պարբերականները՝ հաճախ նաև թարգմանելով ամերիկահայ մամուլում տեղ գտած ոչ պատվաբեր վարկաբեկումները, անձնավորված հարձակումները, մարտաշունչ արտայայտությունները, լուսաբանում էին գաղութում տիրող իրավիճակը: Վերջինս էլ, ցավալիորեն, հիմք էին վերցնում իրենց գործողությունների համար ոչ միայն հայամետ հասարակակն գործիչները, այլև պետական այրերը: Նրանցից ոմանք սկսել էին բացահայտ հայտնել իրենց՝ ոչ նպաստավոր կարծիքները: Եզակի չէին դեպքերը, երբ դիտողություններ էին բարձրաձայնվում. «*Դատրեցուցէք ձեր վէճերն ու բանակոչները, միացեալ ճակատ մը պարզեցէք աշխարհի առջևը»* [20, 1919, 27 յունիսի], կամ հորդորներ հնչեցվում՝ «*Եթէ որ կ'ուզէք ձեր խնդրոյն բարոք լուծումը եւ ձեր բաղձանքներուն իրականացումը տեսնել, պէտք է դատրին ձեր մէջ տիրող այս իրարանցումները, պէտք է կատարեալ միութիւն ունենաք»* [24, 1919, 1 նոյեմբերի, էջ 1401]:

Ուստիև, ամերիկահայությունը գիտակցում էր, որ ամբողջ հայ ժողովրդի և, մասնավորապես, ԱՄՆ գաղութի հայության, համախմբվածությունն առավելապես կարևոր էր «*հենց այն պահուն, երբ Ելուդաս ու Ամերիկա իրենց դիտողութեան ռապակները ուղղած են հայ ժողովուրդի*

իրևև ազգ և անկախ պետութիւն սարելու ընդունակութիւնների վրայ, մեր ժողովուրդը՝ հանձինս կուսակցութիւնների վերջ դներ անհամաձայնութիւններին, ներքին անվաստակութիւններին, թշնամութիւններին ու լեզուագարություններին և ազգային շինարար աշխատանքի լծուէր» [24, 1919, 1 նոյեմբերի, էջ 1401]: Ազգային արժանապատվությունը պահանջում էր սթափ մոտեցումների դրսևորում առկա պայմաններում. «*Հայ ազատագրութեան բաղձանքը իրականացնելու միակ միջոցը պիտի ըլլայ ցոյց տալ մեզմով շահագրգռվող ազգերուն, թէ մենք ունինք բաւականաչափ քաղաքական հասունություն ինքնզինքնիս կառավարելու, երբ մեր պատմական երկրին անկախ ու իրաւատէր ժողովուրդը կը դառնանք»* [20, 1919, 27 յունիսի]:

Քաղաքական բոլոր հոսանքների մամուլն արտահայտում էր հանրության մեջ տիրող՝ մտահոգող և, միևնույն ժամանակ, հուսադրող տրամադրություններն առ այն, որ Ազգային դատի գլխավոր և հզոր աղոյակը հենց իրենք՝ հայերն էին: Այդ դատը կարող էր մեծապես տուժել, եթե հայերը՝ իբրև միություն, դադարեին ուժ և մղում լինել նրա համար, այն կարող էր պարզապես մեռնել, եթե հայերը ջլատեին իրենց՝ առանց այդ էլ, փոքր ուժերը, եթե կուսակցական շահեր հետապնդեին [20, 1919, 18 նոյեմբերի]: Ըստ այդմ, օրակարգում Ազգային Դատի շուրջ տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների միասնական գործելու՝ կուսակցական և անձնական որևէ շահ կամ նկրտում չհետապնդելու պատրաստակամությունն էր: Պարզ է, որ նման միահամուռ դիրքորոշումը ՀՀ քաղաքացիական և զինվորական առաքելությունների ներկայության, նրանց բարերար ներգործության արդյունք էր: Նոյեմբերդեկտեմբեր ամիսներին ամերիկահայ մամուլը, մանրամասն անդրադառնալով քաղաքացիական և ռազմական առաքելությունների գործունեություններին, ընդգծում էր, որ ամերիկյան գաղութն իր ամենափառավոր ու պատմական օրերն էր ապրում [27, 1919, նոյեմբերդեկտեմբեր]:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական առաքելությունը՝ ԱՄՆ-ից տնտեսական և քաղաքական աջակցություն ստանալու նպատակից բացի, նաև պետք է ապահովեր ամերիկահայ պառակտված համայնքի միավորումը [1, գ. 431, թ. 5; 25, 1919, 11 հոկտեմբերի; 24, 1919, 11 հոկտեմբերի], որի «*մարդկային ուժն ու տեխնիկական կարողությունները կենսական նշանակություն ունենին Հայաստանի անկախ պետության համար»* [4, էջ 457]: Հենց այս հանձնարարականի կատարման նպատակով էր, որ Քաջազնունու խմբի անդամների և Ազգային պատվիրակության փոխնախագահ Աբր. Տեր-Հակոբյանի միջև փոխադարձ զիջումների և ըմբռնման հիման

վրա համագործակցություն էր հաստատվել: Վերջինս՝ որպես Պողոս Նուբար փաշայի լիազոր ներկայացուցիչ, միանալով ՀՀ քաղաքացիական առաքելությանը, ամենուր ուղեկցում էր նրա անդամներին: Նույն նպատակին էր ծառայում նաև ռազմական առաքելության անդամների (ներառյալ Ազգային պատվիրակության հատուկ ներկայացուցիչ Չորավար Անդրանիկի) [6, էջ 417] համախմբումը քաղաքացիական պատվիրակությանը և վերջինիս առթիվ կամ նրա կողմից կազմակերպված գրեթե բոլոր միջոցառումներին ներկա գտնվելն ու մասնակցելը:

Իրենց «ենթաբաժանումներով» հանդերձ՝ երկու պատվիրակությունների համատեղ գործունեությունը սկզբնական շրջանում անշուշտ իր դրական ազդեցությունն ունեցավ գաղութում տիրող ընդհանուր մթնոլորտի վրա: Անկախ այն հանգամանքից, թե որտեղ էր լուրջ առումով տեղի ունենում հավաքը, գաղութում ամենուր տիրում էր այն ըմբռնումը, թե բոլորը ներկա էին տվյալ հանդիսությանը: Լիներ դա Նյու Յորքի հանրահայտ Հիպոդրոմում՝ չորս ու կես հազար բազմությանմբ, թե՛ Նյու Ջերսի գողտրիկ եկեղեցում, Բոստոնում՝ 8000 մարդու ներկայությամբ, թե՛ Բալթիմորի ոչ մեծաթիվ համայնքում, պատվիրակներն իրենց խոսքն ու պատգամները հղում էին ոչ միան հավաքված ներկաներին, այլ ԱՄՆ-ի ամբողջ հայությանը: Աննախադեպ էր, որ հայերի այդքան մեծ բազմություն էր հավաքվում տարբեր վայրերում՝ ոչ թե լալու, ողբալու կամ բողոքելու համար, ինչպես սովորաբար ընթանում էին հավաքույթները, այլ ցնծալու և խանդավառելու համար, քանզի դարեր ի վեր առաջին անգամն էր, որ Հայ ազգային իշխանության՝ կառավարության ներկայացուցիչները, հայ քաջարի գորավարներն ու զինվորներ Հայկական դրոշի ներքո հանդես էին գալիս նման հայրենաշունչ մթնոլորտի մեջ: Նրանց ֆիզիկական ներկայությունից գատնով երևում էին այն պատգամներն ու հորդորները, որ հնչում էին զինվորական և քաղաքական դեմքերի շուրթերից: Ողջունի և շնորհակալական խոսքերի հետ մեկտեղ՝ բոլոր պատվիրակները միասնականության կոչեր էին հնչեցնում, ընդգծում կուսակցական հակամարտ պայքարին վերջ դնելու անհրաժեշտությունը: Հ. Քաջազնունին ամենուր մեծարելով Հայկական անկախ պետությունը՝ նշում էր. «Չեզոք մեր ինտրաձոր, ուրեմն այս է միայն որ դուք մեզի տաք բարոյական ու նիւթական օգնութիւն կարճ ժամանակի մը համար, այնպես որ մեր նորածին Հանրապետութիւնը ժամանակ եւ պատեհութիւն ունենայ իր իշխանութիւնը հաստատելու: Մենք բացարձակ հաւատք ունինք թէ Դաշնակից պետութիւնները, եւ մանաւանդ այս մեծ Հանրապետութիւնը, պիտի չզրանան մեզի այս օգնութիւնը» [24, 1919, 1 նոյեմբերի]:

Ամենուր երկու պատվիրակությունների բոլոր անդամների ելույթներն ու ճառերը՝ մեկը մյուսին հաջորդելով, շարունակում ու լրացնում էին ընդհանուր գաղափարը, որն հնչում էր իբրև հայրենասիրության և ազգասիրության ձոն: Չորավար Անդրանիկն իր ելույթներում, հարցազրույցներում, պարբերականներում հրապարակվող կոչերում, նշելով, որ իրենց ընդունել են զանազան հիմնարկություններում՝ կուսակցական, հասարակական, լրատվական, ընդգծում էր. «Ես եկած եմ ամբողջ տառապեալ ազգի մը ծով կարիքներուն օգնութեան գերագոյն գործին ապահովելու եւ ոչ թէ այս կամ այն կուսակցութիւնը քաջալերելու» [25, 1919, 19 դեկտեմբերի]:

Ուստի ընդհանուր տրամադրությունը գաղութում հետևյալն էր. «Հինս որ Հայ գորավարները ու Հայ պատուիրակները սկսած են այցելել այլ եւ այլ Հայ գաղութները, թող բոլոր Հայերը ուշի ուշով ի միտ առնեն եւ գործի դնեն անոնց բերած սիրոյ եւ եղբայրութեան պատգամները, եւ հատուածական ու խմբական ամեն փոքրիկ հաշիւներ ու նկատումներ մէկ կողմ դրած ամեն Հայ անհատ թող պատրաստ ըլլայ կատարեալ անձնութեանմբ տալու թէ իր նիւթական եւ թէ իր բարոյական աջակցութիւնը Հայ պատուիրակութեան ներկայացուցած ազգային նպատակին յաջողութեան համար: Հայ պատգամաւորները որքան ալ յաջողին օտարներէն համակրութիւն եւ օգնութիւն գտնել, արդար իրաւունքով անոնք կ'ակնկալեն որ Ամերիկայի Հայութիւնը լայն սրտով, համերաշխ ոգիով իր այս պարտքը կատարէ» [24, 1919, 20, դեկտեմբերի]:

Ամերիկահայ համայնքի հետ ձևավորվող հարաբերությունների մասին քաղաքացիական առաքելության ղեկավար, նախկին վարչապետ Հ. Քաջազնունին՝ դեկտեմբերի 18-ից 20-ի իր աշխատանքային հաշվետվության մեջ, գործող վարչապետ Ա. Խատիսյանին տեղեկացնում էր, որ պատվիրակությանը հաջողվել է համակրանք հաստատել հայկական գաղութում: Արվում էր ավելին, քան վարչապետը կարող էր պատկերացնել անգամ: Եվ դրա հիմքում ոչ թե պատվիրակության անդամների ջանասիրությունն էր կամ նրանց հատուկ տաղանդները, այլ՝ մի կողմից՝ ձևավորված բարենպաստ հանգամանքները, մյուս կողմից՝ ամերիկյան կյանքի հատուկ ձևը, որը մեծապես հեշտացնում էր բոլոր տեսակի հրապարակային ելույթները, ցույցերն ու քարոզչությունը [1, գ. 431, թ. 5]:

Ներկայացնելով պատվիրակության առօրյան՝ Քաջազնունին գրում էր հետևյալը. «Մեր կյանքն անցնում է բոլորի աչքի առաջ՝ հանրահավաքներ, բանկետներ, այցելություններ, ընդունելություններ: Տանը հանգիստ չկա այցելուներից: Մեր բնակարանը դարձել է յուրատեսակ ուխտագնացության վայր... Շատ հաճախ մարդկանց աչքերին արցունքներ են, ավելի հաճախ

ստիպված ենք իլեղ իրենցից մեր ձեռքերը՝ որպեսզի չհամբուրեն դրանք» [1, գ. 431, թթ. 14 - 15]: Նկարագրված նման հուզումնալից տեսարաններ հաճախ էին հանդիպում բազմազան հանդիպումների, հանրահավաքների և արարողությունների ժամանակ, որոնք կազմակերպվում էին ինչպես հայ համայնքի, այնպես և ամերիկյան տարբեր կազմակերպությունների կողմից [1, գ. 431, թ. 15]: Քաջագունին ավելացնում էր նամակում, որ առաքելության անդամները հրավիրում էին շատ ու շատ քաղաքների համայնքների, կազմակերպությունների և անհատների կողմից, սակայն ֆիզիկապես հնարավոր չէր այդ բոլոր հրավերներն ընդունել:

Նախկին վարչապետը նաև տեղեկացնում էր Ալ. Խատիսյանին, որ բոլոր հանդիպումներն ու հավաքները և զանազան այլ միջոցառումները, պարտադիր կերպով լուսանկարվում էին, հաճախ նաև նկարահանվում և անպայման մանրամասն լուսաբանվում մամուլում՝ ինչպես ամերիկահայ, այնպես և՛ ամերիկյան [1, գ. 431, թթ. 8-9]:

Նշվածից հետևում էր, որ քարոզական աշխատանքներն առաքելությունը կատարում էր բարձր մակարդակով և, ինչպես նշում էր ինքը՝ Քաջագունին, Առաքելությունն ինքնին՝ անզամ առանց ավելորդ ջանքերի, նպաստում էր ամերիկահայության միավորմանը [1, գ. 431, թ. 5]: Ու թեև միասնականության առումով ամերիկահայ համայնքում տվյալ ժամանակ տիրող իրավիճակը, իսկապես, աննախադեպ էր, չ. Քաջագունին, այդուհանդերձ, նշում էր. «Արդյունքներ (իրական իմաստով) առայժմ չկան: Հայ գաղութը դեռ ոչնչով չի իրականացրել իր հայրենասիրական վերելքը» [1, գ. 431, թ. 15]:

Անշուշտ, այդ հայրենասիրական վերելքն ապահովելու ձգտումն էր մղում ամերիկահայ գաղութին անել հնարավորը՝ մոռացության տալ բոլոր տարակարծությունները և զնայ ընդառաջ Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի հեռագրական կոչին՝ Ամերիկայի Ազգային Միության վերակազմելու մասին: Անհրաժեշտ էր, որ հայ գաղութի ստվար զանգվածն իր կամքն ու բարոյական ուժը զգացնել տար՝ վերջ դնելու տիրող քառասյին վիճակին: Սակայն զանազան խորհրդավոր հաշիվներին վերջ դնելու պատրաստակամության հետ մեկտեղ՝ համայնքում, այնուամենայնիվ, տարբերակված՝ երկակի մոտեցումներ էին դրսևորվում: Ինչպես չ. Քաջագունին էր տեղեկացնում Ա. Խատիսյանին. «Տեղի ռամկավարների ղեկավարները հավատարմության հավաստիացումներով էին լցնում իրենց ճառերը և կենացներ հռչակում չանրապետության կառավարության համար: Սակայն պարզ է, որ ամեն ինչ արվում է հարկադրաբար՝ վատ քողարկված թշնամանքով» [1, գ. 431, թ. 22]:

Հնչական մամուլն, իր հավակնոտ մոտեցումներով և վերապահություններով, նշում էր, որ Քաջագունունու բոլոր ճառերում հնչեցրած այն հիմնարար միտքը, որ ազատությունը չի նվիրվում իբրև շնորհք, այն սեփական ուժով է ձեռք բերվում, և որ հայ ժողովուրդն այսօր շատ լավ է հասկանում դա, նույն էր, ինչ տարիներ ի վեր հռչակած Հնչական դավանանքը [23, 1920, 10 հունվարի]:

Դաշնակցական հոսանքի ներկայացուցիչներն էլ իրենց մամուլի միջոցով համերաշխության կոչերի հետ մեկտեղ՝ «մերկացնում էին» պահպանողական ուժերին, որոնք՝ ըստ իրենց, «որպես ռիսերիս հակառակորդներ, խեղաթյուրում էին Դաշնակցության և չանրապետության գործունեությունն ու դիրքորոշումները» [20, 1919, 5 դեկտեմբերի]: Նրանք չէին դադարում վարկաբեկել Ազգային Միությունը՝ վերջինիս, ի սկզբանե «մեռած-ծնած» համարելով, անվանում էին «նախկին»: Նրանք առաջարկում էին Ազգային նոր միություն կազմել ժողովրդական ընտրությունով՝ առանց խտրության կուսակցականի և ոչ-կուսակցականի, և այնուամենայն էլ, որ գաղութի ցրված և ջլատված ուժերը կարող էր համախմբել և մեկ իրական տևական և քաղաքական ուժի վերածելով՝ առաջնորդել այն, միայն մեկ բարոյական ուժ՝ Հայաստանի չանրապետության Պատվիրակությունը: «Ամերիկահայր, ազգային դատին համար պատկառելի քաղաքական ոյժ մը կրրնայ դառնալ, եթե չայաստանի Դիւանագիտական և Չինուորական պատուիրականութիւնը մեզ կառավարելու մենտէյթը ստանձնէ: Ուրիշ կերպ, ուրիշ միջոց մը չկայ, որով յաջող դուրս կրնանք գալ» [1, գ. 431, թ. 5]:

Տարածայնություններ պատվիրակությունների ներսում և դրանց արձագանքը գաղութում

Անկախ այն հանգամանքից, թե որքանով էին ընդունելի Դաշնակցության ներկայացուցիչների առաջարկները, ամերիկահայ համայնքում առաջնորդի դեր խաղալու համար չ՛ պատվիրակությունները նախ իրենք պետք է լինեին համերաշխ և միասնական:

Չ. Քաջագունին դեկտեմբերի երկրորդ կեսին Ա. Խատիսյանին ուղարկված հաշվետվության մեջ, նկարագրելով ԱՄՆ-ում պատվիրակությունների միջև՝ նշյալ ժամանակ ձևավորված փոխհարաբերությունները, գրում էր, որ թեև նրանք անընդհատ այնուամենայն էլ ինչպես նրանք անընդհատ այնուամենայն էլ միասնական ճակատի և միասնական դրոշի մասին, իրականում բաժանված էին երկու ճամբարի [1, գ. 431, թ. 5]: չանրապետության ճամբարում էին ինքը՝ չ. Քաջագունին, գեն. Բագրատունին, Ա. Էնֆիաջյանը և Ա. Փիրալյանը, իսկ պրոֆ. Աբր. Տեր-Հակոբյանը, գոր. Անդրանիկն ու չ.Բոնապարտյանը Պողոս Նուբարի կողմնակիցներն էին:

Շարունակելով նամակը՝ Քաջագունին ընդգծում էր. «Նույն անհամաձայնությունը, շատ սուր ձևով, նկատվում է գաղութում: Դաշնակցականներն ու նրանց համախոհները կանգնած են Հանրապետության կողմում, մնացած բոլորը՝ Պողոսի կողմն են, այսինքն՝ դեմ են Հանրապետությանը (ավելի ճիշտ կլինի ասել՝ դեմ են նրա կառավարությանը, բայց այս սիրալիր մարդիկ շատ դժվար են տարբերում պետությունը կառավարությունից)» [1, գ. 431, թթ. 16-17]: Նշյալ պատկանումը, ըստ Քաջագունու, հնարավորություն չէր տալիս հանրային ուշադրությունը կենտրոնացնել մեկ կոնկրետ գործի վրա և ուղղորդել հանրային կամքը մեկ կոնկրետ ուղղությամբ՝ դրանք գործի դնելու համար: Այդուհանդերձ նա նշում էր, որ ՀՀ պատվիրակության գալն ԱՄՆ երկու լուրջ հետևանք է ունեցել, որոնց արդյունքները պետք է գագավելին շատ մոտ ապագայում:

Առաջինն այն է, որ մենք քարոզչությունը՝ թե՛ գաղութում և թե՛ ամերիկացիների շրջանում, մարդասիրության հողից տեղափոխեցինք քաղաքական և խոսեցինք որպես ներկայացուցիչներ մի ժողովրդի, ով ցանկանում է և կարող է ապրել իր սեփական պետական կյանքով, որը ժամանակավոր աջակցության կարիք ունի՝ սեփական ուժերը կազմակերպելու համար:

Երկրորդն այն էր, ըստ Քաջագունու, որ «մեզանից առաջ ասելով «Հայություն», «Հայ ազգ», «Հայաստան» նկատի էին ունեցել թուրքական Հայաստանը՝ առանց կոնկրետ բովանդակության: Մենք առաջին անգամ պարզ ու միանշանակ խոսեցինք այս պահին Հայաստանի Հանրապետությունում մարմնավորված հայկական պետության մասին, որն ունի իր տարածքը, իր խորհրդարանը, բանակն ու կազմակերպված իշխանությունը: Հայկական հարցն՝ իր ողջ ծավալով լուծելու համար, երկուստեք վերցրեցինք Հանրապետությունը: Որպես մեր քաղաքական ծրագիր՝ հայտարարել ենք Հանրապետության հզորացումը՝ հայկական բոլոր հողերի հետագա միացումով վերջինիս» [1, գ. 431, թ. 18]:

Ու թեև Քաջագունին հույս էր հայտնում, որ նշյալ արդյունքների վերաբերյալ իր դրական սպասումները պետք է որ իրականանային շատ մոտ ապագայում, իրականությունն այլ էր: Գաղութի ոչ դաշնակցական ուղղությունները՝ որքան էլ ոգևորության ալիքի վրա փորձում էին ըմբռնել Արարատյան հանրապետության ներկայացուցիչներին՝ իբրև հայկական պետության մարմնացում, վերջիններս ընկալվում էին, ընդամենը, որպես պետականության խորհրդանիշներ: Ի հակառակ Դաշնակցական մամուլի քարոզչությանը, գաղութում գերիշխում էր այն մոտեցումը, թե. «Հանրապետությունը մերն է. Ամենուս նիրական պարտքն է գայն պահել, գորացնել մեր արեան գնովն իսկ: Բայց Երեւանի

կառավարության հետ չենք կարող համաձայնիկ եղթ ան այնպես կարծե՛ թե՛ իրեն կր պատկանի նաև Ամբողջական Հայաստանի դատին դեկավարությունը, եւ թե, հետեւաբար, պէտք է այլ եւս փակել Փարիզի Ազգային Պատուիրակության դռները» [24, 1919, 20, դեկտեմբերի, էջ 1528]:

Գաղութում և ոչ միայն Ազգային պատվիրակության հետևորդները, ընդդիմանում էին նաև այն կապակցությամբ, որ Հայաստանի նորանկախ Հանրապետությունն իր վրա էր վերցնում Հայկական հարցի լուծման գործը: Տիրում էր այն համոզմունքը, որ Ամերիկյան կամ Եվրոպյան, ճանաչելով Հայկական Հանրապետությունը և մի քանի միլիոն նպաստ կամ փոխառություն շնորհելով նրան, Հայկական խնդիրը լուծած չեն լինի: Ման-Ստեֆանոյի դաշնագրով դիվանագիտական սեղանին դրված խնդիրն Արևմտահայաստանի խնդիրն էր և, բնականաբար, վերջինիս իրական փաստաբանը Փարիզի Ազգային պատվիրակությունն էր: Ուստիև, «միջազգային ներկայ պայմաններու ներքե գոնե՛ Երեւանի կառավարութիւնն ո՛չ ի վիճակի է, ո՛չ ալ իրաւասու է, առանձնապէս ձեռք առնելու այդ խնդիրը» [24, 1919, 20, դեկտեմբերի, էջ 1528]:

Վերոնշյալից հետևում է, որ ամերիկահայության մեծ մասը, որ նույնականացնում էր պետությունն ու կառավարությունը, չէր ընդունում Հայկական բնաշխարհի «Կովկասյան հատվածում» կազմավորված Հանրապետությունը՝ իբրև Հայոց պետականություն: Այս դիրքորոշման ձևավորման և ծավալման մեջ ազդեցիկ դեր էին խաղում հենց Առաքելության՝ Պողոս Նուբարի «ստորաբաժանման» անդամներն՝ Աբր. Տեր Հակոբյանի գլխավորությամբ: Ըստ Հ. Քաջագունու՝ «Տեր-Հակոբյանը և Անդրանիկը (էլ չեմ ասում այստեղի ռամկավարների դեկավարների մասին,) Պողոս Նուբարի կամքը կատարելով, Հանրապետության անկասկած և անհաշտ հակառակորդներն են: Նրանք անում են իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի վարկաբեկեն մեզ և՛ գաղութի, և՛ հենց ամերիկացիների աչքում» [1, գ. 431, թ. 25]: Նախկին վարչապետը լուրջ մտահոգություններ ուներ վերոնշյալների պահվածքի և գործողությունների վերաբերյալ: Նրանց հյուսած բանասարկությունները և ուղղորդված չարախոսություններն ու բացասական գնահատականներն առ այն, որ Հայաստանի կառավարության անդամները «և՛ տղետ էին, և՛ բռնակալներ, և՛ գողեր, և՛ բռնաբեկներ», չէին կարող անհետևանք անցնել: Ամերիկացիների մոտ կասկած էր առաջանում պետությունը կառավարելու՝ հայերի ունակության վերաբերյալ, և դա, որոշ չափով, անվճռականություն էր առաջացնում Հանրապետության ճանաչման գործում [1, գ. 431, թ. 26]:

Հ. Քաջազնունին նաև տեղեկացնում էր, որ ներքին պայքարի առաջին իրական արդյունքն այն էր, որ «թեև զգալի չափով անել էին Հանրապետության օգտին նվիրատվությունները և ֆոնդերը, Դաշնակցությունը նոր հենարան էր ստացել, իսկ չեղորոշից շատերը անցել էին կառավարության կողմը, մինչ օրս չի հաջողվել (ամենայն հավանականությամբ, այսուհետ էլ չի հաջողվի) ամբողջ գաղութում կազմակերպել մեկ ընդհանուր ազգային հանգանակություն: Գործը կախարակի, հավանաբար, նրանով, որ կսկսվեն գուգահեռ հավաքներ տարբեր կազմակերպությունների կողմից՝ տարբեր կարգախոսներով» [1, գ. 431, թ. 27]:

Հ. Քաջազնունու մտավախությունը շուտով իրականություն դարձավ: Հանգանակության գործը նույնպես ընդհանուր և համերաշխ հունով չընթացավ՝ դեռևս 1919 թ. վերջից սկսած: Դաշնակցության Ամերիկայի Կոմիտեն մերժեց Չոր. Անդրանիկի ուղղած համագործակցելու հրավերը: Վերջինս Պողոս Նուբարի կողմից լիազորվել էր՝ ռազմական առաքելության գործունեության հետ մեկտեղ, ստանձնել նաև ԱՄՆ-ում դրամահավաք անցկացնելու պարտականության կատարումը [23, 1920, 11 փետրվարի; 6, էջեր 419-424; 4, էջ 467, 10, էջ 289; 13, էջ 154]: Մերժման հիմքը, ըստ Գ. Փաստրմանյանի՝ «Հայրենիք» օրաթերթում արված հայտարարության, այն էր, որ ամերիկահայ գաղութում հանգանակությունը պետք է կատարվեր և բաշխվեր ամերիկահայ պաշտոնական մարմնի տնօրինությամբ, և ոչ թե դրսից եկածների կողմից [24, 1920, 10 հունվարի, էջ 35]: Նման մոտեցումը զարմանք և զայրույթ էր առաջացրել գաղութում, հատկապես, որ արդյունքում ձգձգվում և տուժում էր կենսական նշանակություն ունեցող գործը: Առանց այդ էլ ամերիկահայությունն իր դժգոհությունն էր արտահայտում, քանի որ կարծում էր, թե 1920թ. սկզբից սկսված հանգանակականության գործն ուշացվել էր. ավելի վաղ ձեռնարկված լինելու պարագայում կասկած չկար, որ մահվան ճիրաններից փրկված կլինեին հարյուրավոր, եթե ոչ հազարավոր կյանքեր: Անշուշտ, շուտ ձեռնարկված այդ գործը հնարավորություն կտար նաև ավելին հանգանակել, քանի որ հնարավոր կլինեին օգտվել՝ ի պատիվ պավիարությունների Նյու Յորքում և Բոստոնում տեղի ունեցած բազմահազարանոց հանրավաքների ընձեռած հնարավորություններից՝ խանդավառությունից, որն ավելի մեծաքանակ նվերներ կապահովեր:

Թեպետ կրկին գլուխ բարձրացրած տարածայնությունները սկսել էին քայքայել այդպես էլ չամրացած միասնությունը, գաղութի քիչ թե շատ չեղորոշ զանգվածը ձգտում էր չկորցնել իր հավատն առ այն, որ «Հայ պատգամադրները եթե մինչ իսկ կր տարբերին ալ իրարմէ անհատական

կարծիքներով քաղաքական ինչ ինչ խնդիրներու մասին, մէկ բանի մէջ կատարեալապէս համամիտ են եւ միացած, այն է՝ մեր հայրենիքի կարօտեալ Հայերուն անմիջական օգնութիւն հասցնելու հրամայական պէտքը» [24, 1919, 20, դեկտեմբերի, էջ 1530]: Համայնքի մեծ մասը պատրաստ էր իր «կարողութեան չափովը տալ մեր նուէրները որ անօթին հաց ունենայ եւ զինուորը զէնք ու հագուստ, աւ է մեր վրայ ծանրացող հայրենասիրական մեծ պարտքը գոր պէտք է կատարենք հաւատարմօրէն, եւ աւ զոհողութիւն կը պահանջէ [24, 1919, 20, դեկտեմբերի, էջ 1530]:

1920 թ. հունվարի վերջին հայոց բանակին օգնելու նպատակով ՀՅԴ-ն նոր հանգանակություն է կազմակերպում, որին հանձն են առնում աջակցել Հ. Քաջազնունին, Գ. Պաստրմանյանը և գեն. Բագրատունին [7, էջեր 511-512]: Իսկ Անդրանիկի կազմակերպած Փրկության հանգանակությանն աջակցում էին պրոֆ. Տեր-Հակոբյանը, Ազգային միությունը՝ ռամկավարների գլխավորությամբ, և բարեգործականի մասնաճյուղերը [6, էջեր 419-424, 10, էջ 289]: Ուստի և՛ Հ. Քաջազնունին, և՛ Անդրանիկը սկսում են շրջագայել Ամերիկայի բոլոր հայաբնակ վայրերով: Ինչ վերաբերում էր Ս.Դ. Հնչակյան կուսակցությանը, ապա «սոյն կուսակցութեան շարքերը ամեն ուրեք անտարբեր կը մնան հանգանակութեան հանդէպ» [6, էջ 420]:

Հանգանակությունների գործը՝ թեև հարաբերական, այդուհանդերձ, հաջողությամբ էր [6, էջեր 421-424] ընթանում՝ չնայած երկու ճամբարների միջև սկսված անհաշտ պայքարի: Այն ուղեկցվում էր փոխադարձ հակաքարոզությամբ, ձախողությունների կազմակերպմամբ, վիրավորանքներով, վարկաբեկումներով և մեղադրանքներով միջոցներ յուրացնելու, իրական տվյալները թաքցնելու, ոչ ճիշտ թվեր և արժեքներ ներկայացնելու մեջ: Անգամ Անդրանիկը «չէր քաշուէր իր սուր պարքերը արձակելու անվերապահօրէն Դաշնակցական շէֆերուն դէմ» [6, էջ 424]: Բայց հենց Ադրանիկն ինքն էլ արժանանում էր նույն վերաբերմունքի և անգամ ստիպված էր լինում իր հասցեին գրված գրաբարություններին հերքումներ տալ մամուլում: Օրինակ «Հայրենիքի»՝ 1919 թ. դեկտեմբերի 21-ի համարում նա հերքում էր, որ «Պահակ»-ի թղթակիցը Դեկտ. 12-ի թիւին մէջ բողոքովին խեղաթիւրուած կերպով է ներկայացուցած: ԵՍ ԵՐԲԷԶ ԸՍԱԾ ՉԵՄ (ընդգծումը՝ գոր Անդրանիկի), որ «այս ազգին մէջ կայ հատուած մը որ հայու տունը կը քանդէ, թող յախտեան կործանի այն հատուածը, եւ թշնամու գնդակէն չեմ մեռնիր այլ զիս սպանողը՝ հայը պիտի ըլլայ»: Այդպիսի գրութիւններ նպատակ ունին լոկ կուսակցութեանց մէջ խռովութիւն յառաջ բերելու, որը երբէք ներելի չէ ներկայ օրերուն. Լաւ կլինէր որ յետ այսու թերթերու թղթակիցները քիչ մը զգոյշ ըլլային

իրենց գրածներուն վերաբերմամբ» [25, 1919, 21 դեկտեմբերի]:

Իսկապես որ, մամուլն էլ իր հերթին էր անում իր բաժին «սև» գործը: Պարբերականներում վերսկսել էին հարձակումներն ու վարկաբեկումները միմյանց դեմ: Հանախակի էին դարձել չտուգված, չճշտված՝ գուցե միտումնավոր սխալ՝ վարկաբեկիչ տեղեկատվությունների սպրդումները: Միևնույն ժամանակ, գաղութի բազմաշերտ հանրությունն անընդունելի էր համարում քննադատության հանդեպ բացասական վերաբերմունքը՝ տեղ գտած հատկապես դաշնակցական մամուլում: Ամերիկահայությունը այն կարծիքին էր, թե Հանրապետության ղեկավարության քննադատությունը չի նշանակում հրաժարվել Հանրապետությունից: Բազմաթիվ առիթներով գաղութի անդամներն արտահայտել էին իրենց նվիրական վերաբերմունքը՝ հանդեպ Հայաստանի Հանրապետությունը, և այժմ չէին կարող պատկերացնել անգամ, որ կգտնվի որևէ հայ, ով չի մեծարի իր ազգային դրոշն ու զինանշանը, չի գնահատի իր խարհիրդարանն ու բանակը և պատրաստ չի լինի ամեն կերպ դրանք պաշտպանել: Պարզապես, չլուծված հարցերն աստիճանաբար հանգեցնում էին ամերիկահայության հուսահատությանը, ինչպես նաև որոշակի անվստահություն առաջ բերում «Հ ներկայացուցիչների հանդեպ: Գաղութի տարբեր խավերի և, հատկապես, քաղաքական կուսակցությունների միջև՝ մի պահ հանդարտված անհամաձայնությունները կրկին գլուխ էին բարձրացրել [23, 1919, 27 դեկտեմբերի]: Այս ամենը 1920թ. սկզբից արդեն հանգեցնում էր, փաստացի, վերջնական պառակտման. «մեր ներքին կեանքը խառնարան մն է երկպառակությունաց և անհամաձայնությունաց՝ Ամերիկայի հայությունը իր ուղին կը շարունակե սարսուռէ սարսուռ...» [26, 1920, 8 յունիսի]:

Ստեղծված իրավիճակն իր հերթին բարդացվում էր ԱՄՆ-ի կառավարության կողմից՝ հայկական խնդիրներին լուծումներ տալու որոշման բացակայությամբ: Այդ ձգձգումը նպաստում էր ամերիկահայության ոգևորության մարելուն և այդպես էլ չկայացած միասնականության փլուզմանը: Հակառակ հայկական առաքելությունների և ամբողջ գաղութի սպասումներին առ այն, որ ԱՄՆ-ի կառավարությունը հնարավոր ամեն բան պիտի աներ Հայկական Դատի լուծման համար, այդ կառավարությունը որևէ քայլ չէր ձեռնարկում: Մեծ հիասթափություն էր արաջ բերել այն փաստը, որ ԱՄՆ-ն մյուս Մեծ տերությունների՝ դաշնակիցների հետ մեկտեղ, չէր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. հունվարին: Ամերիկյան պաշտոնյաները հապաղում էին անգամ անորոշ պատասխաններ տալուց հայկական՝ թե՛ քաղաքացիական և թե՛

ռազմական պատվիրակությունների կատարած դիմումներին: Ինչպես Քաղաքացունին էր փոքրինչ հուսահատված՝ հայտնում Խատիայանին «Միացյալ Նահանգների կառավարությունը դեռ դանդաղում է պատասխանել մեր ներկայացրած պահանջներին: Եզրակացություններ չեն անում [1, գ. 431, թ. 15]: Ես դեռ սպասում եմ (ավա՛ղ, շա՛տ վաղուց) որոշ հարցերի լուծմանը: Ես դեռ չեմ կորցնում հույսս՝ վերջապես Չեզ ինչ-որ կուռ, որոշակի, ընդ որում՝ ուրախ բան հայտնելու համար» [1, գ. 431, թ. 29]: Ավախ, Քաղաքացունու սպասումները չիրականացան:

Եզրակացություններ

1. 1919 թ. աշնանն ԱՄՆ գործուղված Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքացիական և ռազմական առաքելություններին, փաստորեն, չհաջողվեց՝ 1919 թ. վերջին - 1920 թ. սկզբին, իրականացնել իրենց վրա դրված՝ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և ռազմական հանձնարարականների մեծ մասը: Անհաջողությունների շարքում էր նաև խնդրո առարկա ուսումնասիրության՝ ամերիկահայ գաղութում միասնականության հաստատման, ամրապնդումն ու պահպանման խնդիրը:

Հանրապետության պատվիրակությունների այցը, վերջին հաշվով, բարերար դեր չունեցավ գաղութի ազգային կյանքում: Ցավալի է գիտակցել, որ անհնար եղավ իրական փոխըմբռնումը, համախմբումն ու միասնականությունը: Ամպագոռգոռ ու ճող բառերի սնանկությունը, այդուհանդերձ, չհանգեցրեց լուրջ արդյունքների: Ու թեև ժողովուրդը արթնացել էր ու թողել իր լռակյացի, համակերպվողի դիրքը, այնուամենայնիվ, նրան՝ իր ձգտումներն ու պահանջները իրականացնելու համար, պետք էին իրական առաջորդներ և ղեկավարներ: Առաջորդներ, որոնք՝ անկախ օտարի հնարավոր, թե անհնար օժանդակությանը, իզորու կլինեին ժողովրդից մեկ բռունցք ստեղծել՝ հնարավորինս մարտական և կարող վիճակում պահել վերջինին, որպեսզի անհնարինն անել սեփական, ազգային շահերի պաշտպանության՝ եթե ոչ բաղձալիին հասնելու, ապա արդեն եղածը՝ ձեռք բերածը պահպանելու համար:

2. Ուսումնասիրվող ժամանակահատվածում Առաքելությունների միջև և ներսում՝ իսկբանե եղած տարաձայնությունների և անհանդուրժողականության հետզհետե սրացումը բացասական ազդեցություն ունեցավ ամերիկահայ համայնքի վրա: Պատվիրակությունների ժամանման սկզբնական շրջանում՝ հայրենասիրության այլքի ազդեցության ներքո, կարճ ժամանակ տևած համախմբվածությունը և միասնականության դրսևորումները տեղի տվեցին անհամաձայնությունների խորացմանը և նոր հակասությունների առաջացմանը գաղութում: Հատկանշական է այն, որ նշված բացա-

սական իրավիճակի ստեղծումը չէր կանխվել, անգամ, այն հանգամանքով, որ պատվիրակություններն առաջնորդում էին չափազանց ծանրակշիռ և պատվավոր դեմքեր՝ մասնավորապես, ազգային հերոս Չորավար Անդրանիկը և Հայաստանի Առաջին հանրապետության անդրանիկ վարչապետ Հ. Քաջազունին, որի՝ արտասահմանյան գործուղման նպատակահարմարությունն ու երկրից երկարաժամկետ բացակայելու անհրաժեշտությունն այլ՝ լուրջ քննարկման հարց է:

3. Հայության շրջանում նշված ժամանակահատվածում առկա անհամերաշխությունն անհետևանք չմնաց նաև հայկական խնթրների լուծման միջազգային հարթակում: Միամտություն կլինի, իհարկե, մտածել, թե ամերիկահայ գաղութի համախմբվածությունն ու սիրո և եղբայրության մթնոլորտը կարող էր լուրջ դեր խաղալ Հայկական հարցում ԱՄՆ կառավարության քաղաքական դրսևորումներում՝ այն է. Հայաստանի Առաջին հանրապետության ճանաչման, վերջինիս ռազմական և տնտեսական օժանդակություն հատկացնելու հարցերում: Այնուամենայնիվ, հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող թվարկված խնդիրների վերաբերյալ ԱՄՆ-ի պաշտոնական խավերի խուսափողական քաղաքականության մշակման գործընթացում շահարկվել էին նաև հայ ժողովրդին՝ մասնավորապես, ամերիկահայ համայնքին բնութագրող՝ համերաշխության և միասնականության գործոնները:

ԱՄՆ կառավարական շրջանները՝ անգամ չանդրադառնալով հիմնարար՝ միջազգայան, քաղաքական և տնտեսական հենքերին և պատճառներին, անընդունելի էին համարում ստանձնել հանձնակատարությունը՝ մանդատը մի ժողովրդի, որը զուրկ էր՝ ներքին փոխըմբռնումների հատկությունից՝ ուստիև վերջինից բխող ինքնակառավարման որակից; մի ժողովրդի, որը իվիճակի չէր՝ անգամ իր համար վճռորոշ պահերի, վերջ դնելու իր մեջ տիրող պառակտումներին: Ուստիև առանց մեկնաբանությունների է ընդունվում ամերիկացի հայասեր պաշտոնյաներից մեկի խոսքերը. «Ինչպե՞ս կրնաք սկսկալել, որ Ամերիկեան Կառավարութիւնը մէնտէյթը առնէ ժողովուրդի մը որ այսօր իսկ՝ ձեր ազգին այս բախտորոշ օրերուն մէջ գիրար կը հալածեն ու կը հարուածեն: Ամերիկեան Կառավարութիւնը փորձա՞նք պիտի առնէ իր գլխուն» [24, 1919, 1 նոյեմբերի, էջ 1400]: Այսինքն, անհամերաշխության գործոնը, այնուամենայնիվ, իր բաժին ցավալի դերը խաղած ուսումնասիրվող խնդրո առարկայի պարագայում:

4. Առաքելությունների անհաջողությունների և, փաստացի, ծրագրերի տապալման պատճառները բազմաթիվ էին և բազմազան:

Դրանց թվում էին. անձնական նկրտումներն ու դատողություններն, նեղ կուսակցական՝ հատվածական հայացքները, մոտեցումներն ու անհանդուրժեցողությունը; ազգային և հանրային շահի ստորադասվածությունը; փորձառության և մասնագիտական հմտությունների պակասը՝ թե՛ դիվանագիտական ասպարեզում՝ հատկապես ԱՄՆ պաշտոնական հարթակներում շփումներն ապահովելու համար, թե՛ հանրության հետ տարվող գաղափարական աշխատանքների հարթությունում, որտեղ, կառավարության պատվիրակությունը, փաստորեն, չկարողացավ օգտագործել գաղութի հայրենասիրական զգացումներն ու զոհաբերության ինքնամոլությունը: Միայն խոսքերով բան դուրս չէր գա... Անհրաժեշտ էր նախ, իսկապես, գիտակցել որ դրանք սին խոսքեր չէին, արժևորել դրանց իրական իմաստը, ձևակերպումներ տալ դրանց բովանդակությանը: Երկրորդը՝ անհրաժեշտ էր մեկնումիշտ մշակել այդ արժեքները պաշտպանող, գործի դնող ձևաչափերը ու դեկավարվել դրանցով գործնականում; Առանձին պատճառ էր մամուլը՝ իր խաղացած բացասական դերով: Մեծ բաց էր պաշտոնական տեղեկատվական ընդհանուր կենտրոնի և հատուկ թերթի բացակայությունը, ինչը հաճախ հանգեցնում էր ասպատեղեկատվությունների տարածմանն ու դրանց հաջորդող լարվածությունների և խառնաշփոթի, ինչն էլ, իր հերթին, մեծապես նպաստեց գործի տապալմանը: Անհրաժեշտ է նշել նաև, որ, ցավալիորեն բացասական դեր խաղած ԱՄՆ կառավարության ձգձգողական, ոչ ստույգ և, վերջին հաշվով, ոչ հայանպաստ քաղաքականությունը:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

Արխիվներ

1. Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1:

Տպագիր սկզբնաղբյուրներ

2. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.: – Երևան, 2010: – 616+16 էջ:
3. Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R. – Washington, 1919. – 125 p.

Գրականություն

4. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920: Հ. II: – Երևան, 2014: – 708+8 էջ:
5. Ամբարյան Ա., «Խաղաղության պահպանումը Հայաստանում. լուծումներ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (27.09.19-10.10.19)» աշխատու-

- թյունը: – Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2022: – 356 էջ:
6. **Ճիզմէճեան Մ.**, Պաթմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցությանը: – Ֆրեզնո, 1930, տպագր. «Նոր Օր»: – 512 էջ:
 7. **Տօնապետեան Գ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ (1910-1923), Բ. Հատոր: – Պոսթօն, Հայրենիք Հաստատութիւն, 1995: – 511 էջ:
 8. **Չելեայան Ա.**, Չորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. Կենսագրական ակնարկ, Երևան, 1990: – 720 էջ:
 9. **Махмурян Г. Г.**, Армения в политике США 1917-1923 гг. – Ер.: Институт Истории НАН РА. 2018. – 608 с.
 10. **Ованисян Р. Г.**, Международные отношения Республики Армения 1918-1920. – Ереван, 2007, Տիգրան Մեծ հրատ., 890 с.
 11. **Нованнисян R. G.**, From Versailles to London, 1919-1920, vol. II: – Berkley-Los Angeles-London, 1982. – 603 p.

Հոդվածներ

12. **Ավագյան Ք.**, Հայերի հասարակականքաղաքական հարաբերությունները ԱՄՆ-ում (1886-1924 թթ.): Էջեր 174-185 // «Բանբեր Երևանի Համալսարանի». Հասարակական գիտություններ. ԵՊՀ հանդես: – Երևան, 1996, № 3:
13. **Ավագյան Ք.**, Չորավար Անդրանիկ Օգանյանի գործունեությունը արտերկրում (1919 – 1927 թթ.): Էջեր 143-165: // «Պատմա-բանասիրական հանդես»: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, № 2:
14. **Ղամբարյան Ա.**, Հ. Քաջազնունու հաղորդումը ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (Հոկտեմբեր, 1919 թ.): Էջեր 254 -261: // «Պատմա-բանասիրական հանդես»: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, № 3:
15. **Ղամբարյան Ա.**, Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքացիական առաքելության գործունեությունն ԱՄՆ (1919 թ. վերջ – 1920 թ.

սկիզբ): Էջեր 134-149: // «Պատմա-բանասիրական հանդես»: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, № 3:

16. **Ղամբարյան Ա.**, ԱՄՆ-ում Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական առաքելության գործունեության լուսարանումը Հնչակյան մամուլի էջերում (1919 թ.): Էջեր 108-124: // «Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին» նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 1 հունիսի, 2021: – Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2022: – 239 էջ:
17. **Ղամբարյան Ա.**, «Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական առաքելությունն ԱՄՆ-ում (1919 թ. վերջ - 1920 թ. ամառ)»: Էջեր 46-55: // «Регион и мир» գիտավերլուծական հանդես: – Երևան, 2022, հատոր ԺԳ, № 6: – 192 էջ:
18. **Ghambaryan A.V.**, The Military Mission of the First Republic of Armenia and Commander Andranik: Էջեր 74-89: // «Բանբեր հայագիտության», Հայագիտական միջազգային հանդես: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատարակչություն», № 3 (30):

Մամուլ

19. **Ազգ:** – Պոստոն:
20. **Ասպարեզ:** – Ֆրեզնո:
21. **Արագած:** – Կ.Պոլիս:
22. **Արմենիա:** – Մարսել:
23. **Երիտասարդ Հայաստան:** – Չիկագո:
24. **Կոչնակ Հայաստանի:** – Նիւ Եորք:
25. **Հայրենիք:** – Բոստոն:
26. **Պահակ:** – Պոստոն:
27. **Վերածնություն:** – Բոստոն:
28. **Տարոս:** – Պոստոն:

Сдана/Հանձնվել է՝ 05.08.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 12.08.2024

Принята/Ընդունվել է՝ 19.08.2024